Կարգապահական գործ թիվ ԿԳ-21014

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2021թ-ի հոկտեմբերի 12-ի թիվ 290-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ԹԻՎ ԿԳ/172-Ա

ՓԱՍՏԱԲԱՆ ՏԻԳՐԱՆ ԵՂԻՇԻ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի **(այսուհետ նաև՝ Պալատ)** խորհուրդը **(այսուհետ նաև՝ Խորհուրդ)**, նիստը նախագահող՝ Գայանե Դեմիրչյանի, Խորհրդի անդամներ՝ Մարինե Ֆարմանյանի, Հարություն Հարությունյանի, Կարեն Սարդարյանի, Կարեն Մեժլումյանի, Էմին Բեգլարյանի, Ռուբեն Հակոբյանի, Արսեն Հարությունյանի և Պավել Գյուլումյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Աստղիկ Գևորգյանի,

քննության առնելով փաստաբան Տիգրան Եղիշի Հայրապետյանին (արտոնագիր՝ թիվ 159) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը՝

Պ Ա Ր Զ Ե Տ՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>**

Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Վահե Ջիվանյանը (**այսուհետ՝ նաև Դիմող**), դիմելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ, հայտնել է հետևյալը.

Փաստաբան Տիգրան Հայրապետյանը (**այսուհետ՝ նաև Փաստաբան**) 23.05.2021թ-ին բողոք է ուղարկել ՀՀ Բարձրագույն դատական խորհրդին և դիմում է ներկայացրել դատավոր Վ. Ջիվանյանին, որոնցով, ըստ Դիմողի, Փաստաբանը անհարգալից վերաբերմունք է ցուցաբերել դատարանի նկատմամբ:

Մասնավորապես՝ իր բողոքում և դիմումի մեջ Փաստաբանը նշել է հետևյալ բովանդակությամբ արտահայտություններ. *«դատավոր Վ. Ջիվանյանը դատական նիստեր է նշանակում իր քմահաճույքով», «փաստորեն դատավոր Ջիվանյանը արդարադատության իրականացումը հանձնել է իր խնամու հարևանին», «գտնում եմ, որ նման մոտեցումը արհամարհանք է արդարադատության իրականացման գործընթացին, այն հեղինակազրկում է դատարանին և արդարադատության իրականացմանը, իսկ նման գործելակերպ որդեգրած դատավորը անհամատեղելի է*

դատավորի պաշտոն զբաղեցնելուն» և այլն:

Դիմողը խնդրել է քննարկել Փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը:

2. <u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>

Պալատի նախագահի 15.07.2021թ. թիվ 122-Ա/ԿԳ-21014 որոշման հիման վրա փաստաբան Տիգրան Հայրապետյանի նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ՝ «Փաստաբանության մասին» օրենքի (**այսուհետ՝ նաև Օրենք**) 19-րդ հոդվածի 2-րդ կետի, ինչպես նաև Պալատի ընդհանուր ժողովի կողմից 19.10.2019 թվականի թիվ 1-Լ որոշմամբ նոր խմբագրությամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի **(այսուհետ՝ Փաստաբանի վարքագծի կանոնագիրք կամ Կանոնագիրք)** 4.1 կետի խախտման հատկանիշներով:

19.07.2021թ. կարգապահական գործը հանձնվել է կարգապահական գործը նախապատրաստող անձ Նարինե Սարգսյանին (**այսուհետ նաև՝ Նախապատրաստող**):

3. <u>Դիմողի և Փաստաբանի համառոտ բացատրությունները, վկաների ցուցմունքները.</u>

<u>3.1. Դիմողի համառոտ բացատրությունները.</u>

Գործի նախապատրաստման ընթացքում Դիմողը բացատրություն չի ներկայացրել:

Դիմողը, թեև պատշաճ ծանուցվել էր կարգապահական նիստի վայրի, օրվա և ժամի մասին, սակայն Խորհրդի նիստին չի ներկայացել:

<u>3.2 Փաստաբանի համառոտ բացատրությունները.</u>

Գործի նախապատրաստման ընթացքում փաստաբան Տիգրան Հայրապետյանի կողմից 12.08.2021 թվագրված բացատրությամբ վերջինս հայտնել է, որ ներկայացրել է իր վստահորդի շահերը և դատավորի անօրինական գործողությունների նկատմամբ բողոք է ներկայացրել դատավորին և Բարձրագույն դատական խորհրդին, քանի որ

- Օրենքը նման բողոքի քննության համար սահմանում է 10 օր: Դատավորը հերթական նիստը նշանակել է 2 ամիս կտրվածքով:
- Դատավորը այդ գործը քննել է ոչ թե 10 օրում, այլ 6 ամսում:
- Դատավորը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի համաձայն պարտավոր է դատախազից պահանջել գործի նյութերը և 10 օրում նիստն ավարտել, սակայն անցել էր 4 ամիս, բայց դատավորը չէր պահանջել նյութերը:
- Դատավորը պարտավոր էր գործի նյութերի պատճենները տրամադրել կողմերին, սակայն չի տրամադրել այն դեպքում, երբ 2 գրավոր դիմում է ներկայացվել, այնուհետև Դատավորի գործավարը պատասխանել է, որ «մենք չենք տրամադրում նյութերը, Դուք պետք է դիմեք քննիչին և ստանաք դրանք»:

Ամփոփելով վերոգրյալը՝ գտել է, որ իր կողմից ներկայացված բողոքում նշված

արտահայտությունները եղել են հիմնավոր:

Պալատի խորհրդի նիստին Տիգրան Հայրապետյանը չի ներկայացել, թեև պատշաճ ծանուցված է եղել կարգապահական նիստի օրվա, վայրի և ժամի մասին:

<u>3.3 Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:</u>

4. <u>Կարգապահական գործ նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը խորհրդին.</u>

Կարգապահական գործի նախապատրաստման արդյունքում Նախապատրաստողը 15.09.2021թ. կազմել է եզրակացություն:

Նախապատրաստողի եզրակացության վերաբերյալ Պատասխանողը 17.09.2021թ. ներկայացրել է առարկություն:

Կարգապահական գործը Խորհրդին է հանձնվել 16.09.2021թ.

Խորհրդի նիստը տեղի է ունեցել 12.10.2021թ. ժամը 18:30-ին, ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Պալատի ընդհանուր ժողովի կողմից 19.10.2019 թվականի թիվ 1-Լ որոշմամբ նոր խմբագրությամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգի (**այսուհետ նաև՝ Կարգ**) 3.10.3 ենթակետի համաձայն՝ *Պալատի խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Պալատի խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Պալատի խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:*

Խորհուրդը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստը.

Փաստաբան Տիգրան Հայրապետյանը 23.05.2021թ-ին բողոք է ուղարկել ՀՀ Բարձրագույն դատական խորհրդին և դիմումի մեջ փաստաբանը նշել է հետևյալ բովանդակությամբ արտահայտությունները. *«դատավոր Վ. Ջիվանյանը դատական նիստեր է նշանակում իր քմահաճույքով», «փաստորեն դատավոր Ջիվանյանը արդարադատության իրականացումը հանձնել է իր խնամու հարևանին», «գտնում եմ, որ նման մոտեցումը արհամարհանք է արդարադատության իրականացման գործընթացին, այն հեղինակազրկում է դատարանին և արդարադատության իրականացմանը, իսկ նման գործելակերպ որդեգրած դատավորը անհամատեղելի է դատավորի պաշտոն զբաղեցնելուն»* և այլն:

Սույն փաստը հաստատվում է դիմումով և դրան կցված Բարձրագույն դատական խորհրդին ուղղված դիմումով, Փաստաբանի ներկայացրած բացատրությամբ և

առարկությամբ:

6. <u>Փաստաբանի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից տրամադրված տեղեկանքի համաձայն՝ փաստաբան Տիգրան Հայրապետյանը փաստաբանական գործունեության արտոնագիրն ստացել է 21.09.2005թ., և 2018-2021թթ. ընկած ժամանակահատվածում վերջինիս նկատմամբ հարուցվել է 9 կարգապահական վարույթ, որոնցից 7-ը կարճվել է, 2 վարույթով Տիգրան Հայրապետյանը ենթարկվել է կարգապահական պատասխանատվության, որոնք մարվել են:

7. <u>Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբան Տիգրան Հայրապետյանը թույլ է տվել Կանոնագրքի 4.1 կետի խախտում հետևյալ պատճառաբանությամբ:

Կանոնագրքի 4.1 կետի համաձայն՝ *փաստաբանը, ով ներկայանում է կամ մասնակցում է գործին դատարանի կամ արբիտրաժային տրիբունալի առջև, պետք է ենթարկվի այդ դատարանի կամ տրիբունալի գործունեությունը կարգավորող կանոններին, այդ թվում պետք է հարգանքով վերաբերվի դատավորին և/կամ դատավարության մյուս մասնակիցներին: Այդ կանոններին ենթարկվելու պարտականությունը չի սահմանափակում փաստաբանի՝ դատավորի, արբիտրի, կամ վարույթի այլ մասնակիցների գործողությունների դեմ առարկելու կամ այլ դատավարական իրավունքներից օգտվելու հնարավորությունը: Փաստաբանը դատարանի հանդեպ հարգանք դրսևորելու հետ միաժամանակ պետք է իր վստահորդի շահերը պաշտպանի անկաշկանդ և անվախ՝ հաշվի չառնելով իր անձնական շահերը:*

Վերոգրյալի համատեքստում Պալատի խորհուրդը հարկ է համարում պատասխանել հետևյալ հարցադրմանը.

- Արդյո՞ք Պատասխանողը բողոքում շարադրված արտահայտությամբ անհարգալից վերաբերմունք է դրսևորել դատարանի նկատմամբ:

Փաստաբանը, ունենալով առանձնահատուկ հասարակական կարգավիճակ, ունի իրավական և բարոյական պարտականությունների լայն շրջանակ: Փաստաբանը՝ որպես իրավապաշտպան գործունեություն իրականացնող անձ, իրավունք ունի և պարտավոր է բարեխղճորեն պաշտպանել իր վստահորդների իրավունքներն ու օրինական շահերը օրենսդրությամբ չարգելված բոլոր միջոցներով: Հետևաբար, փաստաբանի պարտականությունների հասցեատերերը ոչ միայն վստահորդներն են, այլև արդարադատության գործառույթ իրականացնող մարմինները՝ դատարանները: Փաստաբանի այս երկակի կարգավիճակը բխում է **Կանոնագրքի 1.1 ենթակետի պահանջներից, որի համաձայն՝** *փաստաբանը կոչված է ծառայել արդարադատության շահերին, ինչպես նաև այն իրավունքներին ու արտոնություններին, որոնք նրան վստահել են պաշտպանելու իր վստահորդի շահերը:*

Միևնույն ժամանակ, վստահորդի շահերի պաշտպանությունը չի կարող իրականացվել Կանոնագրքին հակասող կամ Կանոնագրքի դրույթները խախտող եղանակներով և միջոցներով:

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *փաստաբանական գործունեությունն իրավապաշտպան գործունեության տեսակ է, որն իրականացնում է փաստաբանը և ուղղված է իրավաբանական օգնություն ստացող անձի իրավունքների, ազատությունների և շահերի իրականացմանն ու պաշտպանությանը՝ օրենքով չարգելված բոլոր միջոցներով և եղանակներով:*

Պալատի խորհուրդը գտնում է, որ դատարանի և դատավորի նկատմամբ հարգալից վերաբերմունք դրսևորելու պարտականությունը նախատեսված է Կանոնագրքով, ուստի՝ չի կարող իրավաչափ համարվել դատարանի կամ դատավորի նկատմամբ անհարգալից վերաբերմունք ցուցաբերելը, եթե նույնիսկ այն կատարվել է վստահորդի շահերի պաշտպանության նպատակադրմամբ: Վստահորդին իրավաբանական օգնություն ցույց տալը չի կարող պատրվակ հանդիսանալ դատարանի հետ հարաբերություններում ոչ իրավաչափ վերաբերմունք ցույց տալու համար:

Սույն կարգապահական գործի շրջանակներում Պալատի խորհուրդը հարկ է համարում անդրադառնալ նաև այն հարցին, թե արդյոք դատավորի անձի նկատմամբ ցուցաբերվող առերևույթ անհարգալից վերաբերմունքը վերագրելի է դատարանին:

ՀՀ Սահմանադրության 91-րդ հոդվածի համաձայն՝ *Հայաստանի Հանրապետությունում արդարադատությունն իրականացնում են միայն դատարանները՝ Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան:*

ՀՀ Սահմանադրության 97-րդ հոդվածի համաձայն՝ *արդարադատություն իրականացնելիս՝ դատավորը և սահմանադրական դատարանի անդամը անկախ են և ենթարկվում են միայն օրենքին:*

ՀՀ դատական օրենսգրքի 6-րդ հոդվածի համաձայն՝ *Հայաստանի Հանրապետությունում արդարադատություն իրականացնում են միայն դատարանները՝ Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան:*

Նույն օրեսգրքի 7-րդ հոդվածի համաձայն՝ *արդարադատություն և որպես դատարան՝ օրենքով նախատեսված այլ լիազորություններ, ինչպես նաև դատավորի կարգավիճակից բխող իրավունքներ իրականացնելիս դատավորն անկախ է:*

Վերոնշյալից ակնհայտ է, որ դատավորի կողմից իր պաշտոնեական լիազորություններն իրացնելիս և դրանց կապակցությամբ նրան գրավոր կամ բանավոր կամ որևէ այլ կերպ հասցեագրված ոչ իրավաչափ կամ անհարգալից վերաբերմունքը վերագրվում է նաև դատարանին:

Տվյալ պարագայում Խորհուրդը հաստատված է համարում այն փաստը, որ Փաստաբանը իր բողոքում և դիմումի մեջ կատարել է անհարգալից արտահայտություն՝ նշելով ***«փաստորեն դատավոր Ջիվանյանը արդարադատության իրականացումը հանձնել է իր խնամու հարևանին»:***

Խորհուրդը արձանագրում է, որ Փաստաբանի նման վարքագիծը որևէ կերպ պայմանավորված չի եղել պաշտպանի՝ որպես դատավարության մասնակցի, իրավունքներով, ուղղված չի եղել օրենքով չարգելված միջոցներով իր վստահորդի շահերի պաշտպանությանը և որևէ կերպ հիմք չի տալիս ենթադրելու Փաստաբանի կողմից օրենքով սահմանված կարգով նախագահող դատավորի գործողությունների դեմ առարկելու վարքագիծ դրսևորած լինելու մասին:

Վերոգրյալը համադրելով սույն գործի փաստերի հետ՝ Խորհուրդն ուշադրություն է դարձնում նաև այն հանգամանքին, որ ներկայացված բողոքում նշված արտահայտությամբ Փաստաբանը նպատակ է հետապնդել անհարգալից վերաբերմունք դրսևորել դատարանի նկատմամբ և բողոքում շարադրված հանգամանքները որևէ կերպ նպատակ չեն հետապնդել լավագույնս ներկայացնել վստահորդի շահերը:

Հետևաբար, Խորհուրդը գտնում է, որ Պատասխանողի վարքագծում առկա է Կանոնագրքի 4.1 կետի խախտում:

****

Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է պահպանել սույն օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները:*

Օրենքի 19-րդ հոդվածի վերոնշյալ նորմը փաստաբանի վարքագծի իրավաչափությունը գնահատելիս հղում է անում Կանոնագրքի իրավադրույթներին: Այսինքն՝ Փաստաբանի կողմից Օրենքի նշյալ իրավադրույթի խախտման հանգամանքն ուղղակիորեն կապվում է Կանոնագրքի շրջանակներում Փաստաբանի վարքագծի գնահատման հետ: Հետևաբար, Կանոնագրքի որևէ դրույթի խախտումը հանգեցնում է նաև Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի խախտմանը:

Վերոնշյալի հաշվառմամբ՝ Խորհուրդը գտնում է, որ Փաստաբանի կողմից Կանոնագրքի 4.1 կետի խախտումը հանգեցնում է նաև Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի խախտմանը:

Անդրադառնալով կարգապահական խախտման դրսևորման մեղքի ձևին՝ Խորհուրդը փաստում է, որ Փաստաբանը դրսևորել է համապատասխան վարքագիծը դիտավորությամբ, քանի որ գիտակցել է իր վարքագծի ոչ իրավաչափ բնույթը:

****

Կարգապահական տույժի ընտրությունը

Օրենքի 39.9 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *փաստաբանի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժը պետք է համաչափ լինի կատարված խախտմանը: Կարգապահական տույժ կիրառելիս փաստաբանների պալատի խորհուրդը հաշվի է առնում նաև խախտման հետևանքները, փաստաբանի անձը, մեղքի աստիճանը, առկա տույժերը, փաստաբանին բնութագրող ուշադրության արժանի այլ հանգամանքներ:*

Օրենքի 39.9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *փաստաբանի կարգապահական պատասխանատվության հարցը քննելուց հետո փաստաբանների*

պալատի խորհուրդը կարող է փաստաբանի նկատմամբ կիրառել կարգապահական տույժերի հետևյալ տեսակներից մեկը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքի՝

1) նկատողություն.

2) խիստ նկատողություն.

3) մասնակցել լրացուցիչ վերապատրաստման դասընթացների

4) տուգանք

5) փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցում:

Անդրադառնալով նշանակվող կարգապահական տույժի տեսակին՝ Խորհուրդը հաշվի է առնում վերոնշյալ հանգամանքները, այդ թվում՝ խախտման բնույթը, մեղքի աստիճանը, ինչպես նաև փաստաբան Տիգրան Հայրապետյանի անձը բնութագրող հանգամանքները:

Վերոգրյալից ելնելով՝ Խորհուրդը գտնում է, որ սույն կարգապահական գործով անհրաժեշտ է ընտրել «նկատողություն» կարգապահական տույժի տեսակը:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով Օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի 14-րդ կետի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7-րդ հոդվածի 5-րդ մասի և 39.9-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջներով,

Խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Փաստաբան Տիգրան Եղիշի Հայրապետյանին (արտոնագիր՝ թիվ 159) ճանաչել մեղավոր «Փաստաբանության մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի, ինչպես նաև Կանոնագրքի 4.1 կետի պահանջների խախտման համար:

2. Փաստաբան Տիգրան Եղիշի Հայրապետյանի նկատմամբ կիրառել (նշանակել) կարգապահական տույժ՝ նկատողություն:

3. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

<u>Ծանոթություն.</u> Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝ Գայանե Դեմիրչյան

12 հոկտեմբեր 2021թ.
թիվ ԿԳ/172-Ա
ք. Երևան